ԲՅՈՒԼԵՏԵՆ

Մայիս 2025թ.

Պալատի հերթական ընդհանուր ժողով

2025թ. մայիսի 24-ին «Էլիտ պլազա» բիզնես կենտրոնում համատեղ հավաքի ձևաչափով տեղի ունեցավ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հերթական ընդհանուր ժողովը:
Ժողովին մասնակցում էին Պալատի անդամ փորձագետ հաշվապահներ և աուդիտորներ, պետական հատվածի, բիզնես և գործարար ոլորտների ներկայացուցիչներ:

Օրակարգում ընդգրկված էին Պալատի 2024թ. տարեկան գործունեության, գույքի օգտագործման, ֆինանսական հաշվետվությունների, Պալատի նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատմանը, Պալատի խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովների անդամների ընտրությանը վերաբերող հարցեր:
Ելույթներով հանդես եկան Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, Ֆինանսների նախարարի տեղակալ, ՀՎԽ նախագահ Արման Պողոսյանը:
Ժողովում ընտրվեցին Պալատի խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովների անդամները:

Ընդհանուր ժողովում հաստատվել են Պալատի 2024թ. տարեկան գործունեության, գույքի օգտագործման և ֆինանսական հաշվետվությունները, Պալատի նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ որոշումները:
Ժողովում փակ գաղտնի քվեարկության արդյունքում ընտրվել են Պալատի խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովների անդամները:
Խորհրդի անդամներ են ընտրվել Թաթուլ Մովսիսյանը, Մանվել Ղազարյանը, Հովհաննես Պետրոսյանը, Արթուր Հարությունյանը, Նաիրի Ադամյանը, Արմեն Հովհաննիսյանը, Լեռնիկ Հարությունյանը, Էմիլ Վասիլյանը, Դավիթ Ազատյանը, Լիդա Թադեոսյանը, Էրիկ Հայրապետյանը, Վարդան Նաչարյանը, Իրինա Գևորգյանը, Արտակ Հովհաննիսյանը, Հռիփսիմե Վարդանյանը:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ են ընտրվել Արթուր Հակոբյանը, Անի Խաչատրյանը, Աննա Չալյանը, Լավրենտի Պողոսյանը, Արթուր Հարությունյանը:
Ելույթներով հանդես են եկել Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը, Ֆինանսների նախարարի տեղակալ, ՀՎԽ նախագահ Արման Պողոսյանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Մայիսին գումարվել է Պալատի խորհրդի 3 նիստ՝ 12.05.2025թ.-ին, 14.05.2025թ.-ին և 29.05.2025թ.-ին:

1**2.05.2025թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 10 հարց: Քննարկման ընթացքում հաստատվել են Պալատի որակի և կարգապահական հանձնաժողովին անդամակցությունը դադարեցնելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատին անդամակցությունը որպես փորձագետ հաշվապահ անդամ դադարեցնելու և որպես աուդիտոր անդամ անդամակցելու, դիմումի համաձայն անդամակցությունը Պալատին դադարեցնելու, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրման ընթացակարգում փոփոխություն կատարելու, Պալատի 2024թ. գործունեության հաշվետվությունը հաստատելու մասին որոշումները:

14.05.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 3 հարց: Քննարկման ընթացքում հաստատվել են Պալատի 2024թ տարեկան ֆինանսական հաշվետվությունները, Պալատի 2024թ. գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունը և 25.12.2024թ. N 38-Լ որոշման (Պալատի բյուջե) մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ որոշումները:

1**9.05.2025թ.** նիստի օրակարգում ընդգրկված էր 1 հարց: Քննարկման ընթացքում հաստատվել է 29.04.2025թ. N 10-Լ որոշման մեջ (Պալատի կանոնադրության փոփոխություններ) փոփոխություն կատարելու մասին որոշումը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 02.05.2025թ.-ին և 22.05.2025թ.-ին, որում աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 5(հինգ) անձի և հավանություն է տվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 06.05.2025թ.-ին, որում որոշել է առաջարկելՊալատի խորհրդին՝ հաստատել ընդհանուր թվով 6(վեց) ֆիզիկական անձանցանդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

05.05 - 07.05.2025թ.-ին տեղի է ունեցել «Փոխառության ծախսումներ» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Հովհաննես Պետրոսյանը:**

05.05.2025թ.-ին տեղի է ունեցել «Աշխատանքային պայմանագրի կնքումը էլեկտրոնային թվային համակարգով. հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ժորա Սարգսյանը:**



2**9.05.2025թ.**-ին տեղի է ունեցել «Հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման փաստի և դրանց նկատմամբ շահութահարկի հաշվարկման համապատասխան տոկոսադրույքների կիրառումը, ոչ ռեզիդենտին վճարվող եկամուտների նկատմամաբ շահութահարկի և ԱԱՀ-ի հաշվարկման հնարավոր ընթացակարգերը, կրկնակի հարկումը բացառող և հարկերի վճարումից խուսափումը կանխող համաձայնագրերի կիրառման ընդհանուր ընթացակարգերը» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Հովհաննես Յանիկյանը:**



30.05.2025թ.-ին տեղի է ունեցել «Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի կիրառում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Նաիրուհի Ավետիսյանը:**



Պալատի գրասենյակի հանդիսավոր բացում

2025թ. մայիսի 23-ին Մոնթե Մելքոնյան 46/2 հասցեում տեղի ունեցավ Պալատի գրասենյակի բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էին Պալատի անդամները, պաշտոնատար անձինք, աուդիտորական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ելույթներով հանդես եկան Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀՎԽ նախագահ Արման Պողոսյանը, Պալատի խորհրդի անդամ Հովհաննես Պետրոսյանը: